



«Այբ» կրթական հիմնադրամ
Երևան 0009, Կոռյուն 19ա
Հեռ.՝ +374 10 54 37 07, +374 98 54 37 07
info@ayb.am
www.foundation.ayb.am

Երևան, 10 հուլիսի, 2017 թ.

Մամուլի հաղորդագրություն Ռոբոտների համաշխարհային օլիմպիադա. հաղթողը կմեկնի Կոստա Ռիկա

Հուլիսի 11-ին Հայաստանում «Այբ» կրթական հիմնադրամի կողմից արդեն երկրորդ անգամ կանցկացվի **Ռոբոտների համաշխարհային օլիմպիադայի ազգային փուլը**:

Այս տարի մրցույթին կմասնակցի 7 թիմ Երևանից և մարզային տարբեր դպրոցներից: Թիմերը նախ կմրցեն նախընտրական փուլերում, ապա կշարունակեն պայքարը եզրափակչում:

Ռոբոտների համաշխարհային օլիմպիադայի ազգային փուլում **հաղթած թիմը** նույնպես կմեկնի **Կոստա Ռիկա**՝ մասնակցելու միջազգային փուլին և ներկայացնելու Հայաստանը:

Սիրով հրավիրում ենք լուսաբանելու մրցույթի եզրափակիչ փուլը, որը **կմեկնարկի ժամը 18:00-ին «Այբ» դպրոցում** (Երևան, Թբիլիսյան խճ. 11/11):

Ռոբոտների համաշխարհային օլիմպիադայի մասին

Ռոբոտների համաշխարհային օլիմպիադայի ազգային փուլի անցկացումը «Այբ» կրթական հիմնադրամի բազմաթիվ ծրագրերից մեկն է, որը նպատակ ունի միավորելու աշխարհի դպրոցահասակ երեխաներին ու երիտասարդներին ռոբոտաշինության շուրջ և զարգացնելու նրանց ստեղծարարությունը, նախագծելու և խնդիրներ լուծելու հմտությունները՝ կրթական հետաքրքիր մրցույթի միջոցով:

Ռոբոտների համաշխարհային օլիմպիադան հիանալի հարթակ է 21-րդ դարում արդիական գիտելիքներն ու հմտությունները յուրացնելու համար: Այն գիտության, տեխնոլոգիայի և կրթության ոլորտներին առնչվող նախագիծ է: Միջազգային առաջին մրցույթը տեղի է ունեցել 2004 թ.-ին, և նրան մասնակցել է 12 երկրից 4000 թիմ: Այսօր ՌՀՕ-ին մասնակցում է 54 երկրի ավելի քան 21700 թիմ:

«ՌՀՕ 2017»-ի ազգային փուլի բացառիկ կազմակերպիչ՝ «Այբ» կրթական հիմնադրամ: Բացառիկ հովանավոր՝ «Creative Educational Technologies» (CET) ընկերություն, որը «LEGO® Education»-ի պաշտոնական մատակարարն է Հայաստանում: